ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Հասմիկ Ստեփանյան, Պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2023 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Պարտքի և կանխիկ հոսքերի կառավարում թեմայով դասընթացին

5. **Քննարկված թեմաները.**

- Պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման սկզբունքները,
- Կանխիկ հոսքերի կանխատեսում, կանխիկի բուֆեր,
- Հարկաբյուջետային քաղաքականություն, բյուջեի կատարում և դրանց փոխկապվածությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման հետ,
- Դրամավարկային քաղաքականության փոխկապվածությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման հետ,
- Պարտքային գործիքներ, կարճաժամկետ իրացվելիության կառավարման գործիքներ, կանխիկի ակտիվ կառավարում,
- Ներքին պարտքի շուկա, պարտքի կառավարման ռազմավարություն, տարեկան փոխառությունների ծրագիր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 8 երկրների 26 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի և ՀԲ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: ԱՄՀ-ի և ՀԲ-ի ներկայացուցիչների կողմից մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց առաջադրվել են պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի շրջանակներում շոշափվեցին կանխիկ հոսքերի կառավարման, կանխատեսման ու համապատասխան պատասխանատուների շրջանակը, ինչպես նաև կարևորվեցին որպես կանխիկ հոսքերի ակտիվ կառավարման գրավական կոորդինացման հանձնաժողովի ստեղծումը: Կանխատեսման որակը բարձրացնելու համար առաջարկում եմ ստեղծել համապատասխան կոորդինացման հանձնաժողով, որի անդամները կլինեն շահագրգիռ գերատեսչությունների ու ստորաբաժանումների ներկայացուցիչներ, մասնավորապես, եկամուտների կանխատեսման, ծախսերի ծրագրման, պարտքային գործառնությունների համար պատասխանատու անձիք, ինչպես նաև Կենտրոնական բանկից ներկայացուցիչ (կանխիկ հոսքերի, պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականության կոորդինացման կարևորությունից ելնելով): Հանձնաժողովի ներկայացուցիչները առաջիկա շաբաթվա համար՝ օրական կտրվածքով ներկայացնեն իրենց կանխատեսումները և առաջնորդվեն դրանով (հնարավոր շեղումների մասին ևս

(տրամաբանական ժամկետներում) արձանագրելով): Վերջինս հնարավորություն կտա Գանձապետական միասնական հաշվի մնացորդը պահել ցանկալի մակարդակում՝ կառավարման արդյունքում ապահովելով տոկոսային եկամուտներ:

Քանի որ կանխիկ հոսքերի ակտիվ կառավարումը ենթադրում է ինչպես կանխիկ հոսքերի կանխատեսման որակի բարձրացում, այնպես էլ գործիքակազմի ընդլայնում, ապա կարծում եմ այս ուղղությամբ ևս պետք է ընդլայնել ներկայիս կանխիկ հոսքերի կառարման գործիքակազմը, մասնավորապես, օգտագործել նաև միջազգային պրակտիկայում հայտնի դեպոզիտային աճուրդները, ռեպո, մեկօրյա (overnight) գործառնությունները: Վերջինիս իրագործման համար անհրաժեշտ է ակտիվ քննարկումներ սկսել Կենտրոնական բանկի և բանկային համակարգի մյուս մասնակիցների, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

03 հոկտեմբերի, 2023թ.